

# ՄԻ ՊԱՏՎԵՐ ԻՄ ՅԻՇՈՐՈԼԻԹԻՒՆԻՑ

ԳԵՐՈԳ ԲԱՇԻՆՉԱՂԵՍՆԻ

## I

Ա. գիւղի մի խուլ անկիւնում դեռ մինչև այսօր կանգնած է կիսափուլ մի խրճիթ։ Այդ խրճիթը տեսնողի գութն էր շարժում դեռ նոր շինած ժամանակ անդամ, իսկ այժմն, որ ամբողջապէս մի կողքի վրայ է պառկել ու բոլորովին քայլայւել, աւելի տիտուր տեսարան է ներկայացնում։ Այդ խրճիթը ունէր իր առաջ խնամքով մշակած մի փոքրիկ պարտէզ, լի հաղողի որթերով ու տեսակ տեսակ պտղատու ծառերով։ Այժմս այդ պարտէզն էլ գոյութիւն չունի, սակայն այս ու այն տեղ երեւում են չորացած մի քանի ծառի բուներ, որոնք, իբրև լիշտատակ, դեռ ևս շարունակում են իրանց գոյութիւնը։ Այդ խրճիթը բախտի բերմամբ դարձեալ պէտքական է անտէր ու քաղցած շների համար ձմեռւայ գիշերներին։ Գիւղական կիսամերկ երեխաները սովոր են հաւաքւել համարեայ ամեն օր այս խրճիթի մօտ ու խաղալ, իսկ հասակաւորներն այս կողմ անցնելիս՝ մոտաերում են այս հարկի տակ կատարւած արկածները և ըստուած հողին լուսաւորէ, էհ մարդ էր էլին ասելով անցնում գնում են Մանուկները համոզւած են, որ գիւղաքն այսուեղ է գիշերում և հէնց այն երկու տախտակի վրայ է պառկում, որ իրար հետ գրւած են խոնաւ գետնի վրայ։ Այս քանդւած խրճիթը, որ ամբողջապէս փայտից է եղել կառուցած, փոքր առ փոքր կողոպտում է աղքատներից։ Պառաւ կանաչք վաւելիք են հաւաքում այստեղ, իսկ շրջմոլիկ աղերք մեխեր են հանում տախտակների միջից ու մրգավաճառի մօտ մրգի հետ փոխում։

Անցնում են երկար տարիներ, բայց խրճիթը նոյնն է մնում. գարնան անձրևներն են փտեցնում, ամառը շոգից են ճաքճքում տախտակները, աշնանը կատաղի քամիներն են քանդում, ձմեռը ձիւների տակ է թաղւում, բայց դա իր քայլայւած դրութիւնը շարունակում է: Մի բան, որ անշարժ ու անվաս մնացել է, դա զէնքեր ու սուր գործիքներ սրելու համար մի քար է: Այս քարը, որ բաւական մեծ է և մի քանի փութ ծանրութիւն ունի, կիսով չափ թաղւած է հողի մէջ և ինչպէս երևում է դա ծառայել է միենոյն ժամանակ անձրևների ջրերից տան պատը անվաս պահելու համար: Այս քարի զարմանալի յատկութիւնը յայտնի է ամբողջ գիւղին: Մոյլ ու դատարկաշրջիկ մարդիկ անպակած են այս քարի մօտ: Նրանք ամեն օր զալիս են այստեղ ու իրանց դանակները սրում: Խրճիթի ուղիղ կենդրուում մի հաստ ու անտաշ սիւն է ցցած, երեխի դա առաստաղն ու կառուրը ամրապինդ պահելու համար է եղել: Մանուկների համար խօսակցութեան անսպառ նիւթ է այս սիւնը: Մէկը պատմում է թէ դա Քոսա-Գասպարի բազմաթիւ զէնքերը կախանելու համար է եղել, միւսը չի համաձայնուում, պնդելով թէ ոչ թէ զէնքերի համար է եղել, այլ Քոսա-Գասպարը երբ զողերին ու աւազակներին բռնում էր, այս սիւնից էր կապում ու երեք օր քաղցած պահելուց յետոյ ծեծում էր ու դուրս վռնդում:

Սկսում են տաք-տաք վիճաբանել և վերջասկս միաձայն վճռում են, որ այս սիւնը ծառայել է թէ մէկի և թէ մի սի համար: Խրաքանչիւր շաբաթ երեկոյ այցելում են այստեղ ոտարբորիկ կանայք և խրճիթի մի անկիւնում մի զոյգ կոպէկանոց մեղրամոմ են վառում, ծունը դնում ու ազօթում: Գիւղի բնակիչների ասելով Գասպարի տանը արևելքի կողմի անկիւնում սուրբի մասունք է եղած: Պատմում են նոյնպէս, որ խրճիթն անտէր մնալուց յետոյ զիւղի քահանան այդ մասունքը տարել է եկեղեցի, բայց եկեղեցում դա չի կամեցել մնալ, նոյն գիշեր և եթ վերադանել է իր տեղը: Քահանան այդ օրւանից աչքի լոյսը կորցրել է, ակնոցների միջոցով անզամ հաղիւ հազ կարողանում է ժամագիրք կարդալ:

## II

**Մանկութեանս եօթ-ութ տարեկան հասակումս շատ զարմանալի արկածներ էի լսում Քոսա-Գասպարի կեանքից, Նանօթերեխաններից ոմանք, որոնք շրջում էին փողոցները ամբողջ օր, համարեա ամեն անգամ նոր-նոր համբաւներ էին բերում ինձ Գասպարի քաջութիւնների վերաբերեալ և լսում էի այդ բոլորը մեծ ազահութեամբ և նախանձում էի ընկերներիս, որ իրանց աչքերով տեսած են Գասպարին։ Մի քանի անգամ փորձեցի հօրիցս էլ իմանալու որ և է քաջազործական արկածներ Գասպարի կեանքից, բայց զժբաղտաբար ոչ մի անգամ նպատակիս չը հասայ, Հայրսժառում էր միմիայն և անտարբեր կերպով ասելով ԸՊոսա-Գասպարը կատուի փոշոտալուց անգամ վախենում էր վերջ էր դնում իմ հարցասիրութեան։ Երեխայական երեակայութիւնս օրէց օր ընդարձակում էր Գասպարի վերաբերմամբ։ Ես դրան երեակայում էի ոչ թէ սովորական մարդ, այլ մի աժդահա, որի տեսքից կարելի էր միմիայն սարսափել։**

Մի առաւօտ մեր հարեան Պօղոսի տղէն Արշակը շնչասպառներս վազեց մեր տուն և կակազելով ու շփոթելով հազիւ հասկացրեց ինձ, թէ Գասպարը անտառում բռնել է Աբուքարին ու բերում է և որ մեր փողոցում արդէն մեծ բազմութիւն է հաւաքւել և սպասում են։ Յափշտակւած այս ուրախալի լուրից իսկոյն դուրս պրծայ տանից ու վազեցի փողոց, ուր գիւղի բոլոր ծայրերից երեխաններ էին հաւաքւել։ Կային նոյնապէս գիւղի դատարկաբան երիտասարդներ, որոնք անգործութիւնից ձանձրացած՝ օրւայ ամեն մի չնչին չարեքից մեծ զւարծութիւն են ստանում։ Այնուեղ էր նոյնապէս և կիսախելազար նատօն իր տարօրինակ դէրիայով ու գզզած կեղառա մազերով։ Երիտասարդները սրախօսական զանազան հարցեր էին առաջարկում նատօին և նրանից հայնոյական պատասխաններ ստանալուց յետոց, բարձրաձայն ծիծաղում էին։ Սրանցից մի փոքր հեռու մի ալազափի դրան մօտ հաւաքւած էին նոյնապէս մի քանի պատանիներ ու երիտասարդներ ու լուրջ դատողութիւններ էին անում Գասպարի մասին։ Նրանցից ամեն մէկը իրանից մի բան էր աւելացնում և այսպէս ընդհանուր խօ-

սակցութիւնը գեղեցկացնում էին։ Ի հարկէ այս բոլոր դատողութիւնների առարկան Դասպարն էր։ Նև էլ մի երկու երեխանների հետ միասին մօտեցել էինք խօսակցութեանը և անդադար պատուաներ անելով խմբի շուրջը՝ աշխատում էինք մօտենալ խօսողին աւելի լաւ լսելու համար։ Նրանք պատմում էին Արուքար զողի մասին, որ առաջ գոզացել էր ուստա Խաչատուրի կարմիր ձին և որ Գասպարը իմանալով այս անիրաւ վարմունքը և խղճալով ուստա Խաչատուրին՝ սար ու ձոր էր ընկել ու վերջապէս բռնել էր սրիկացին և լաւ ծեծելուց յետոյ կապել կաշկանդել էր պարաններով ու այժմս բերում է յանձնելու դատարանին։ Մեր խմբին ըստ զիտեմ որ կողմից մօտեցաւ ցնցոտիների մէջ փաթաթւած և մի կառը սև հացկրծելով մօտ տասներեք տարեկան սևաւեալ մի տղայ։ Երեխանները սրան տեսնելուն պէս աղմուկ բարձրացրին, Արուքարի քրոջ տղայ, Արուքարի քրոջ լակոս, աղաղակելով ծաղրի ենթարկեցին, մի երկու հատ էլ քոտակներ տւեցին։ Խեղճ երեխաննայեց աջ ու ձախ և երբ չը տեսաւ ոչ մի սպաշտական՝ արտասուքից խեղճելով ու հեկեկալով հեռացաւ բազմութիւնից։ Նա իր հացի կտորը վայր էր ձգել ձգել հեռքից։

Յունիս ամսւայ օրերից մինն էր։ Արևը նոր էր թեքւել դէպի արևմուտք։ Երկինքը ծածկւած էր մանր ու սպիտակ նօսր ամողերով։ Փողոցում հաւաքւած ամբոխի համբերութիւնը հատնում էր։ Ամենքն էլ ձանձրացել էին խօսելուց։ Հանգիստ էին թողել և նատօյին։ Նա ամբոխից առանձնացած նստել էր մի պատի տակ ու գրապանից հանում էր զանազան կապոցներ ու շորի գոյնզգոյն կտորներ, նայում էր, մոտածում էր, խորհրդակցում էր ինքն իրան ու նորից ծալում, կապում ու գրապանը դնում։

—Տղերք, լսում էք աղմուկի ձայն, —բացականչեց մէկը։

—Այ՞ո, այ՞ո, կրկնեցին միւսները, Արուքարին բերում են։

Այս լսելով մի տեսակ ցնցում զգացի մարմնիս մէջ։ Փողոցի հեռու ծալրում երեւաց փոշի բարձրացնելով մի բազմութիւն, որ դիմում էր դէպի մեր կողմը։ Մենք ամենքս էլ միանգամից շարժեցինք մեր տեղերից ու սկսեցինք գնալ դէպի այն բազմութիւնը։ Սիրաս տրոփում էր, շնչառութիւնս արագացել էր։ Ազահութեամբ նայում էի ու որոնում Գասպարին, որ իմ կարծիքով իսկոյն պէտք է որոշւէր միւս բոլոր հասարակ մահկանացուներից, իր ահռելի հա-

սակով ու քաջ դէմքով, սակայն այլպիսի մի բան չէր նշմարւում ամբոխի մէջ։ Նուտով մենք հասանք ու խառնւեցինք նրանց հետ Սա մի աղմկայի բազմութիւն էր, ամենքի դէմքի վրայ ժպիտ ու ուրախութիւն էր դրոշմած, բոթում էին միմեանց, ծիծաղում էին ի սրուէ ու հարայ տալով շարունակում էին իրանց ճանապարհը։ Արուքարը որ ամբոխի ուղիղ կենդրոնումն էր, կեղծ ժպիտն ու անհոգութիւնը երեսին համարձակ քայլում էր։ Նրա ձեռքերը մէջքի վրայ խաչաձև կապկապել էին հաստ պարաներով։ Գասպարը, չուրուխը սղմած իր սե ատամների տակ ու մորթէ գլխարկը ծռած, հպարտ հպարտ գնում էր։ Նրա զանազան մէդալներով ու խաչերով զարդարւած կուրծքը դուրս էր ցցւել, ճակատը ճնգրոտւել ու շրթունքները ուսւել, նա ոչ մի կողմ չէր նայում, նրա հայեացքը զուռզ էր ու խիստ։ Ես իմ ամբողջ ուշադրութիւնս Գասպարի վրա էի դարձրել։ Նրա արդէն մաշւած ու գունատ դէմքը իր անմազ ծնոտով ու վերին շրթունքով անդուրեկան տպաւորութիւն էր թողնում վերաս։ Խնչ և իցէ ես ենթադրում էի, որ քաջ ու անվեհեր մարդկանց արտաքին տեսքը երեկի հէնց այս տեսակ պէտք է լինի։ Փողոցային չարաճճիները, ամբոխի առաջն ընկած, օյիններ էին անում։ Կոտրած կաւի ամանները ու ժանդրուած պղնձէ կաթսաները իրանց համար երաժշտական գործիքներ էին դարձրել ու ծւալով ու շւացնելով, փշելով ու դմբդմբացնելով անտանելի աղմուկ ու շփոթ էին բարձրացնում։ Խսկ մի նիհար ու կաղ պատանի երկայն փայտի ծայրին պատուած շաղիկ էր ձեացնում ու թռչոտելով ամենքից առաջ էր գնում։ Արուքարը ժամանակ առժամանակ կտնդ էր առնում, մանաւանդ երբ նկատել էր, որ տնակիների լուսամուսներից հետաքրքիր կանանց աչքերը կենդրոնացած են նրա վրա ու զլուխը թափ տալով բացականչում էր «երեսիս թքեցէք եթէ Գասպարի զլուխը նղած չը տեսնէք, այդաւաճան անօրէն...» Ամբոխի յետելից դալիս էր ուստա Խաչատուրը և իր ձին բերում։ Վերջապէս հասանք բանտի շէմքին, Արուքարին ներս զցեցին, զուռը կողպեցին ու բազմութիւնը սկսեց ցրւել։

—Ես շտագով վերադառնում էի առւն և փափաղում էի շուտով հասնել ու պատմել բոլոր տեսածներս։ Միւնոյն ուղղութեամբ

գնում էին երկու արհեստաւորներ բարձրաձայն խօսելով։ Ակամաց ականջիս դիպան հետևեալ բառերը.

— Այդ անպիտան Գասպարի արածը տմարդութիւն է։

— Իա ի՞նչ մարդ է, որ խօսում ենք նրա մասին...

Երբ հասայ տուն, խկոյն սկսեցի շտապով պատմել այն, ինչ որ տեսել էի:

— Ինչ է պատահել, մի հասկացրու, հարցրեց հայրս մեր ծառային։

— Աբուքարը, պատասխանեց ծառան, — ձի էր գողացել ու անյալսացել։ Գասպարը, հանդիպելով նրան, պատահմամբ անտառում առաջարկել է ընկերանալ ու այսպէս երդել են միմեանց չը դաւաճնել։ Գասպարի խորհրդով մտել են Գէօյի այգին տանձ ուտելոււ երկուսն էլ բարձրացել են ծառը, խորամանկ Գասպարը յանկարծ կոտրել է այն ճիւղը, որի վրա Աբուքարը կանգնած է եղել ու այդ ողորմելուն վայր ձգել ահազին բարձրութիւնից։ Յետոյ իջել է, ուշաթափ ու ջարդւած մարդուն ամուր կապել է պարաններով։ Նկել է գիւղը ու պարձեցել է թէ բանել է զողին։

Հայրս ժպտաց դառն կերպով ու ասաց՝ «ուրիշ ի՞նչ բանի շնորհք ունի այդ թշւառականը։»

— Ասում են Շամիլի ժամանակ մեծ քաջութիւններ է արել։ Հայրս նորից ժպտաց։

— Ասում են մարմինը գնդակների ու սրի հարւածներից մաս է արած։ Քթի վրա ունեցած վէրքի մասին ինքը ահազին պատմութիւն է անում։

— Մօտ 20 տարի առաջ չեմ յիշում ում շունն էր յարձակել ու խածել, ասաց հայր։

Ծառան մնաց բերանը բաց։

Անցաւ ժամանակ։ Մի անգամ աշնան գեղեցիկ եղանակներին մենք, զիւղի երեխաներս, խաղում էինք Գասպարի սնակից ոչ հեռու, երբ յանկարծ սարսափելի քամի բարձրացաւ։ Շուտով սկսեց կարկտախառն անձրեւ և մի ակնթարթում օրը մթնեց։ Գասպարի եղբօր որդին, որ նոյնպէս մեզ հետ էր խաղում, առաջարկեց իրանց

լորձիթը մտնել, հաւատացնելով որ տանը մարդ չը կայ: Մենք, թրջւած ու թողարած, վազելով հասանք ու մտանք խրճիթ:

Սկզբում ինձ վերայ օտարոտի տպաւորութիւն գործեց սենեակի ներսը: Զգում էի նոյնպէս երկիւղ: Դուռը կողաքեցինք: Ով մեզանից կօշիկներ ուներ՝ հանեց, ով չուներ՝ ուները մի կերպ մաքրեց ու բոլորեքեանս բարձրացանք թախտի վրա ու մաշւած գորդի վրա ծալպատակ նստեցինք:

—Հայրդ թրբ վախճանւեց, հարցրի ես մեր հիւրընկալ Գիղումն, բայց իմ դիտաւորութիւնս էր խօսացնել Գասպարի մասին:

—Նատ ժամանակ է, ես այն միջոցին մէկ տարեկան եմ եղել:

—Իսկ մայրդ, նորից հարցրի ես:

—Կը լինի երեք կամ չորս կամ հինգ տարի:

Զեմ յիշում, կարձ կարեց Գիղումն: Երևում էր, որ որբութիւնը ասնջում էր նրա ինքնասիրութիւնը:

—Քեզ ով է լողացնում կամ շորերդ ով է լւանում—հարցրեց կողքիս նստած մի երեխաց:

—Հօրաքոյլս, երբ որ դալիս է իրա գեղից.

—Կօշիկներ կամ գուլքաներ չունիս, հարցրեց մի ուրիշ երեխաց:

—Գուլպաներս հօրաքոյլս կը բերէ վաղը կամ մէկէլ օր:

—Իսկ կօշիկներ:

—Կօշիկներ... կօշիկներ քեռիս է առնում ինձ համար, բայց միշտ փոքր է գուրս դալիս ու դարձեալ յետ ենք տալի. Էհ թնչ կանեմ կօշիկներ, ես չեմ սիրում:

—Քեռիդ չի ծեծում քեզ, հարցրի ես:

—Զէ, իսկի չէ:

Սուտ ես խօսում, Գիլու, ասաց կողքիս նստողը,—մի անդամ ես տեսաց ինչպէս Գասպարը ճիպոտով ծեծում էր քեզ:

—Հա, հա, մոռացայ, ասաց կարմրելով Գիղում, մի անդամ, ուղիղ մի անդամ ծեծեց, բայց չը ցաւեց, իսկի չը ցաւեց:

—Նատ ուժեղ է քեռիդ, հարցրի ես:

—Իսկի ուժեղ չէ, մի անդամ կէս գիշերիս մեր այս դուռը ծեծում էին, քեռիս զարթեցրեց ինձ ու հարցրեց ով է ծեծում մեր դուռը. ասացի թէ երեխ քամի է: Յետոյ քանի քունս տանում էր՝ բոթում էր ինձ ու զարթեցում էր, ասում էր «մի՛ քնիր,

խօսենք։ Ես հասկանում էի որ նա վախենում էր, շատ վախենում էր։ Մենք ամենքս բողոքեցինք Գիգոլի դէմ՝ ստախօսութեան համար, պնդելով, որ Գասպարի նման քաջ մարդ աշխարհիս երեսին չը կայ։ Նա ամեն կերպ աշխատում էր հաւատացնել մեզ, որ ինքը ճշմարիտ է խօսում, սակայն մենք ամենքս խլացնում էինք նրա ձայնը։

Դուրսը քամին մռնչում էր, անձրեն ու կարկուտը շարունակում էր։ Խրճթի մէջ կտուրի մի քանի տեղից ջուր սկսեց կաթել։ Գիգոլը մի տեղ կաթսա դրեց, միւս տեղ քեղաններ, թախտի վրայից գորգը հաւաքեց ու ապահով տեղ դրեց։

Բոլոր ժամանակ աչքս յառած էր հրացանի վրա, որ պատից կախարած էր Երբ խօսակցութեան նիւթը հատաւ, ես սկսեցի հարց ու փորձ անել այդ հրացանի մասին, այսինքն թէ ումն է սպաննել Գասպարը դրանով և այն։ Վերջապէս վճռեցինք ողատի վրայից հանել այդ հրացանը ու զննել թէ լիք է թէ ոչ։

—Տղերք, ես կարող եմ ճանաչել, ասաց համարձակ մէկը, և փշեց խողովակի մէջ, —լսեցէք՝ քամին դուրս է գալիս թէ ոչ։ Մենք ամենքս, որ հեռու էինք կանգնել, պատասխանեցինք թէ այդ դուրս է գալիս։

Մի փոքր ժամանակ պտտացնելուց ու վիճելուց յետոյ Գիգոլի աղերսանքի պատճառով հրացանը նորից կախարինք իր տեղը։

—Եկէք, տղերք, հեքիաթներ պատճենք, առաջարկեց Գիգոլը։ Ես երեք դլսանի դեի հեքիաթը գիտեմ։

—Այդ հեքիաթը ես էլ գիտեմ, ասացի ես։

—Ես էլ գիտեմ, ասաց միւսը։

Այդ միջոցին դուան ծեծելու ձայն լսեցի Մենք վախեցած միմեանց երեսներին նայեցինք, իսկ Գիգոլը սաստիկ գունատեց։ Կրինւեց ծեծելու ձայնը և սրա հետ միասին հասաւ մեր ականջին կոպիտ ձայն՝ բայց արա, սատկած մուկ։

Գիգոլը նայեց մեր աշքերին այնպիսի մի հայեացքով, որ կարծես օգնութիւն էր խնդրում մեզանից, յետոյ շտապով մօտեցաւ դռանը և բայց արաւ։

Մենք քաշւեցինք աւելի մութ կոշմերը և շունչներս կապած մեր սրան բարախումն էինք լսում։

Ներս մտաւ Գասպարը քթոցը մէջքին շալակած ու մահակը ձեռքին։ Գիգոլին մի քանի կոպիտ խօսքեր ասելուց յետոյ զետնին դրեց իր բեռը ու նստեց թախափ վրա, ոտի վրացից ցեխոտ լաթերը հանելու համար։ Բարձրացաւ թախափ վրա, բաւական մօտեցաւ մեզ, իսկոյն շուռ եկաւ, նորից հեռացաւ, նստեց ու կարծես խորասուղւեց մաքերի մէջ։ Ես այս տեսակ երկիւղ դեռ ևս չէի փորձել, Խեղճ Գիգոլը կանգնած էր կիսակենդան և կախել էր գլուխը։

—Գիգոլ, քաղցրութեամբ կանչեց Գասպարը, —Գիգոլ, մարդու հոտ եմ զգում, մի քանի մարդկանց հոտ եմ զգում, արդեօք մի կայ այստեղ։

—Ի-ի-իրանկ մտան այստեղ, ես-ես մեղաւոր չեմ... շուտով պիտի գնան, —կակազելով հազիւ վերջացրեց խօսքը։

Գասպարը վերկացաւ տեղից, մօտեցաւ մեզ ու ներողամտաբար արտասանեց՝ «միք վախենալ զաւակներս, ես ձեզ վնաս չեմ տայ։ Ես աւազակների ու չար ողիների թշնամի եմ, նրանք սարսափում են ինձանից, իսկ դուք միամիտ կացէք, եկէք նստեցէք մօտս, միք վախենայ։»

Այս ասելով նստեց հաստ սիւնի տակ, հանեց գօտիի միջից չուրուխը, պատրաստեց, կրակ տւեց ու սկսեց ծխել։ Յետոյ շըրթունքները ծռեց ու ատամները հուպ տալով մի առանձին ձեռվ թուք արձակեց։

—Նստեցէք, զաւակներս, նստեցէք մօտս, հէնց կողքիս, աւելացրեց նա։

Մենք մօտեցանք ու շարւեցանք նրա դիմացը։

Մեր լիզուները պապանձել էին։

—Բաղդաւորներ, բաղդաւորներ, սկսեց Գասպարը, դեռ ևս չէք փորձել կեանքի դառնութիւնները։ Օհ, օհ, օհ, վազ, վազ, վազ, ամբողջ դէմքը ծռմռելով աւելացրեց նա, —անձրեն եկաւ ու ցաւերս նորոգւեցան։ Գիգոլ ջան, գտիր մեր աւանակը, անձրեի տակ կարող է մրսել, բեր այստեղ։ Գիգոլը, որ մեր քամակին էր պղղած, բարձրացաւ իր տեղից ու առանց խօսք ասելու դնայ։ Դուռը բաց արաւ ու լսեց անձրեի շխչխոց։ Իրան երկնքի տակ զգալով, բացականչեց ուրախ ձայնով «հաջան», հաջան» ու անհետացաւ։ Խեց թւաց որ Գիգոլը վերին ասաիմանի դժբաղդ էր

իրան զգում, սակայն ուզեց ձևացնել մեր առաջ, իբր թէ իր սիրելի ու ցանկալի հրաժանը ստացաւ:

— Վայ, վայ, նորից կրկնեց Գասպարը, ու աչ ոտը ձգելով դէպի մեղ, ասաց՝ քաշեցէք մատներս, խնդրում եմ:

Մենք կատարեցինք նրա խնդիրքը: Ես ինձ համար անսպասելի կերպով հարցրի Գասպարին թէ ինչն է ցաւում:

— Ամբողջ մարմինս, մէջքս, կուրծքս, ոտներս:

— Ինչու, աւելի համարձակ կերպով հարցրի ես:

— Ինչու, ինչու, պատմութիւնը շատ երկար է: Տեսնում ես քիթս, ուղիղ այսպէս է այլանդակւած ամբողջ մարմինս:

— Ինչու է քիթդ այդպէս ծուռ ու վատ, հարցրեց մէկը:

— Ես գիտեմ ինչիցն է, միջամտեցի ես ուրախ ուրախ, մի չար շուն խածեց:

— Հա հա հա, ով ասեց քեզ, հա հա հա, բարձրաձայն ու անախորժ կերպով ծիծաղելով հարցրեց Գասպարը:

— Հայրս, ամաչելով ասեցի ես:

— Հայրդ հանաք է արել, խարել է քեզ:

Այս ասելով չիրուսը դարդիեց, մաքրեց ու գոտիի մէջ ամրացրեց:

— 18... թւականին, սկսեց Գասպարը, երբ անհաւատ Շամիլը աւերում էր մեր գիւղերը ու կոտորում էր մեր քրիստոնեաներին, ես այն ժամանակ ձեր հասակին կամ, կարելի է, մի երկու տարով մեծ լինէի: Մի գիշեր, երբ ծնողներս քուն մտան, ես վերցրի հօրս զէնքերը ու թաքուն գնացի դաշտը, ուր այն ժամանակ երթեւեկութիւնը դադարած էր: Գնացի դաշտը, դուն ես իմ պարոնը, և մի թփի տակ պաղպեցի: Շունս էլ հետո էր, նրա հոգուն մատաղ, ախ ինչ շուն էր... է՛հ... հրացանս ձեռքիս պատրաստեցի, ատրճանակն էլ պատրաստեցի, թուրս էլ, խանչալս էլ, մի խօսքով բոլոր զէնքերս ձեռքիս էր և սպասում էի անօրէններին, այ նրանց հաւատը քանդւի: Այդ միջոցին շունս իմաց տւեց ինձ, որ թշնամիք են գալիս. և իրաւ կարծես թէ գետնից դուրս պրծան երեք ձիաւորներ: Ես կանչեցի նրանց ըթէ տղամարդիկ էք՝ կանգնեցէք, միք փախչի:

Այստեղ նա կանգ արաւ: Գլխի վրայից հանեց իր հին մորթէ

գլուարկը, զբեց ծնկան վրա ու պատրաստուեց շարունակելու իր պատմութիւնը: Մենք, երեխաններս, առաջ էինք քաշւում աստիճանաբար դէպի Գասպարը և միմեանց բոթելով աշխատում էինք քամակին ըլ մնալ: Պատմութիւնը և հափշտակել էր մեզ և երկիւղի մէջ ձգել:

— «Կանգնեցէք թէ տղամարդիկ էք», կանչեցի նորից ես, «ապա թէ ոչ՝ դնացէք, լեւաք ծածկեցէք դլխներիդ»: Այս ասելով ուղղեցի հրացանս, բաց դա ինձ դաւաճանեց: Դէն ձգեցի հրացանս, վերցրի ատրճանակս, արձակեցի ու երեքից մէկը վայ տալով վայր գլորւեց ձիուց: Նրա երկու ընկերները սարսափահար փորձեցին փախչել: Ես ընկայ յիտելից և նրանց առաջը կտրեցի: Նրանք միմեանց ասացին «խանչալ բօսինարու», զլուխը կօտինարու»: Ես բացականչեցի «Ահայ Մինին տիւրի»:

Այս ասելով այնպէս զոռաց որ մենք սաստիկ վախեցանք, իսկ մեզանից մէկը ճիշ արձակելով լաց եղաւ: Մենք ընկերներս աշխատեցինք սիրո տալ նրան ու նախատել վախկոտութեան համար:

— Միք վախենաւ, զաւակներս, հանդիսատ կացէք, ասաց Գասպարը: Յետոյ վերկացաւ տեղից, մօտեցաւ անկիւնին և մի կճուճի միջից ընկոյզներ հանեց ու մի մի հատ բաժանեց մեզ:

— Յետոյ, յետոյ, անհամբերութեամբ դիմեցինք մենք, իսկ մեզանից մէկը ուղեց իմանաւ, թէ ինչ ասացին լէզգերէն:

— Նրանք լեզգերէն ասացին «խանչալները հանենք ու սրա գլուխը կտրենք», իսկ ես բացականչեցի «այ վախկոտներ, ես ձեր հոգին կը հանեմ»:

— Յետոյ, յետոյ, նորից մենք դիմեցինք աղաչելով:

— Յետոյ, շարունակեց նա, — իմ օրհնած թուրս զարկեցի մէկի գլխին ու ուղղակի երկու կէս արի ամբողջ մարդուն: Երրորդը շատ քաջ մարդ էր, երկար պատերազմեցինք իրար հետ ևս տաս անդամ էի զարկում թուրս, նա մի անդամ հազիւ էր հասցնում ինձ: Մեր ոտերի տակը դետինը դողում էր: Վերջապէս բռնեցի նրա մազերից ու զլուխը խանչալովս հեռացրի մարմնից: Գլուխ կտրելու միջոցին անհաւատը ընկաւ վրաս ու ատամներով քիթս ամբողջապէս ուղեց գջլել: Եյ, զարդաշ, հայրդ այս է ուղեցե ասել, ի հարկէ շունն ու լեզգի մէկ է, հիմա հասկացմը:

Վերջին խօսքերը ինձ էին վերաբերում:

— Եթոյ, յետոյ յափշտակւած դարձեալ դիմեցինք մենք: Նա հանգիստ կերպով հանեց չուրուխը, նորից սարքեց ու շարունակեց պատմութիւնը:

— Առասպէմին վերցրի այդ երեք լեզզիների գլուխները, ածեցի խուրջինի մէջ, շալակեցի ուսիս ու տարայ քաղաք—Թիֆլիս: Գնացի ամենամեծ Հինովնիկի մօտ ու նրա առաջ սեղանի վրա դարսեցի այդ գլուխները: Հոտել էին այդ անտէրները:

Զգւանքով արտասանեց այս վերջի խօսքերը և թքեց: Մենք ամենքս էլ թքեցինք:

— Տեսնում էք, մասը դնելով իր մէդալներից մէկի վրա ասեց, — այս մեղալը այդ քաջութեան համար եմ ստացել:

— Իսկ միւս մէդալներն ու խաչերը ինչու համար ես ստացել, հարցրինք մենք ու անհամբերութեամբ նայեցինք դէմքին:

— Եատ երկար պատմութիւններ են, դժւար է պատմել, անտարբեր կերպով պատասխանեց նա:

— Մէկ էլ պատմի, մէկ էլ, խնդրելով դիմեցինք մենք:  
Նա, փոքր մոտածելուց յետոյ, սկսեց:

— 18...-ին Սուրբ Սարգսի շաբթին...

Այս միջոցին գուսը բացւեց ու Գիդոլը ուրախ դէմքով ներս վագեց:

— Բերեցիր, աւանակ, հարցրեց Գասպարը, և երբ տեղեկացաւ որ բերել է, իսկոյն պատուիրեց խնդրելու ձեռվ, որ տանէ աղքիւրը ջուր խմեցնելու: Գիդոլը համարեա արտասուքի աչքերով ու ամբողջապէս թրջւած ու ցեխուտած անմիջապէս հեռացաւ: Մենք խնդրեցինք Գասպարին, որ առժամանակ թոյլ տա Գիդոլին մեզ հետ նստելու ու լսելու: Նա մեզ համոզեց որ Գիդոլուն գիշերը կը պատմէ միւնոյն բանները:

— Սուրբ Սարգսի շաբթին, իսկ յետոյ, հարցրի ես:

— Հէնց սուրբ Սարգսի շաբթին գնում էի Ղազախի սուրբ Սարգիսը համբուրելու: Այն ժամանակ արդէն մեծ էի, քսան տարեկան տղամարդ էի: Թիֆլիս որ հասաց, իսկոյն լուր տարածւեց իւր մասին: Զահել տղերքը հազարներով յետեիցս գալիս էին ու միմեանց ցոյց էին տալիս ինձ վերայ, թէ այ երկելի Գասպարը

սաէս: Շուտով քեղարեցայ Թիֆլիսում: Հեր օրհնածները մի բողէ հանգիստ չէին տալիս ինձ:

Մի օրից յեռոյ թողի Թիֆլիսը ու գնացի Ղազախ: Առողք Սարգսի ուրբաթ օրը տեղ հասաչ, պաս էի պահում: Ամբողջ շարբաթ քաղցած ու ծարաւ լինելուց յետոյ պառկեցի մի մեծ ծառի տակ ու քնեցի:

— Են շունն էլ հետդ էր, հարց արաւ կողքիս նստողը:

— Սուս, յօնքերը կիտելով նկատեց Գասպարը, — այդպիսի բան էլ չասես, երբ խօսք է լինում սուրբի մասին:

— Մեղք է, մեղք է, էլ չասես, կրկնեցինք մենք ամենքս:

— Պառկեցի ու քնեցի: Եկել էին հարիւրից աւելի լիզգիք, թոկերով շատ պինդ կապել էին ինձ, դրել էին սայլի վրայ ու տարել Դաղստան Շամիլի մօտ: Երբ զարթեցայ, Շամիլը հարցրեց՝ պո՞ւ կարեցիր իմ երեք քաջերի գլուխները: Ես պատասխանեցի թէ քաղցած եմ, գեռ մի կտոր հաց տեսցէք:

Եերեցին մի մեծ քեղան թեփ ջրի մէջ թրջւած ու զրին առաջս Զարէս ինչ էր՝ կերայ ու կշտացայ: Ոտներիս շղթաներ գցեցին ու բանդարկեցին: Գիտէի որ միւս առաւօտը կրակի մէջ պէտք է զցէին ինձ ու այրէին: Ականջիս ծակի մէջ, մատը կոխելով ասաց նա, թաքցրած ունէի մի տեսակ մազ, այդ մազով կտրաեցի շղթաները ու կէս զիշերին պատի մի մասը քանդելով դուրս եկայ: Քսանից աւելի զինւորած պահապաններ դուրսը քնած էին: Մօտեցայ նրանցից մէկին ու այս բուռնցքս այնպէս զարկեցի զլիին, որ լաւաշի նման տափակեցրի: Վերցրի նրա զէնքերը ու առիւծի նման գոռացի «այ հանիվաճահեճոյ»:

Մենք երկիւղից կուչ եկանք ու կտանք Գասպարին: Նրա չմշկւած անմազ դէմքը իր սուր քթով ու բարակ անդուրեկան պոռշներով սաստիկ խիստ արտացայտութիւն ունէր այդ միջոցին: Գլսարկը զրեց զլիին ու այնպէս ձևացրեց, իբրև թէ վերջացրեց պատմութիւնը:

— Յետոյ, յետոյ, ասա, բոլորն ասա, աղաչեցինք մենք:

— Զեմ կարող պատմել, կը վախենաք:

— Զենք վախենում, բոլորը ասա, չենք վախենում, — մի քանի անդամ կրկնեցինք մենք:

— Լաւ, կը պատմեմ; կանչեցի բարձրաձայն, և այսանիվաճահեծոց:

— Ի՞նչ է հանիվաճահեծոց հարցը կողքի նստողը:

— Դա նշանակում է վերկացէք ու բռնեցէք ինձ, եթէ քաշեր էք, ապա թէ ոչ բոլորիդ կը կոտորեմ: Սկսւց մեր մէջ պատերազմ, այնպիսի պատերազմ, որ գժուխքից աւելի սարսափելի էր: Ել ինչ երկարացնեմ, տասնուիննը գնդակ հասցը ինձ, բայց վերջը այդ լեզգիներից ոչ մինն էլ կենդանի չը մնաց իմ հարւածներից: Վերջապէս նրանց գլխաւորի գլուխը կարեցի ու ճանապարհ ընկայ: Պէտք է ասեմ, որ արիւնաքամ եղայ ու ստիւլւցայ մի ծառի տակ նստելու: Լուսադէմին ականջիս հասան սարսափելի հրացանաձութեան ձայներ: Խսկոյն հասկացայ որ իմ յիտեկից են գալիս: Չոքեցի ու աղօթեցի: Յանկարծ աչքիս առաջ մի ձիաւոր նրեւաց, որ կանչեց Գասպար, Գասպար, եկ նստիր դու էլ ձիուս վրայ, միասին գնանք ձեր գիւղը: Ել ինչ երկարացնեմ: Նա ինձ բերեց այստեղ, մեր տուն, իջեցրեց ինձ ձիուց ու ինքը իր ձիու հետ միասին անյայտացան: Դա Սուրբ Սարգիսն էր, նրա զօրութիւնին մատադ:

Այս ասելով նա գլխարկը վերցրեց, շուռ եկաւ դէպի արևելեան անկիւնը ու երեք անգամ երեսը խաչակնքեց: Մարմնիս միջով սառսուս անցաւ ու մազերս բիզ-բիզ կանգնեցան: Ամենքս էլ ահ ու դոզի մէջ էինք ընկել: Այլ ևս չէինք յանդգնում խօսք ասելու:

— Միւս օրը, շարունակեց նա, — գնացի քաղաք ու անօրէնի գլուխը հետո տարաց: Մտայ նոյն մեծ չինովնիկի տունը, զլուխը հանեցի խուրջինից ու դրեցի սեղանի վրայ: Չինովնիկը զարմացաւ ու ասաց թէ սա հաջի Մուրթուզալիի գլուխն է: Խսկոյն դուրս բերեց միւս սենեակից այս խաչը, աջ ձեռքով ցոյց տւեց իր ձեռքով, համբուրեց ճակատս, հազար մանէթ էլ փող բաշխեց ու «մալադէց»<sup>1)</sup> ասելով ճանապարհ դցեց:

Խրճթի մէջ լոյսը բոլորովին նւազւեց, հազիւ որոշում էինք միմեանց դէմքերը: Կողքիս նստողը բոթում էր ինձ ու փսխում էր ականջիս՝ գլնանքու: Գասպարը յանկարծ վեր թռաւ տեղից ու

<sup>1)</sup> Ռուսմբէն խօսք, որ նշանակում է քաջ, դոչադ:

երկու ձեռքով գրկեց մեծ սիւնը: Մենք էլ վեր թռանք ու իրարանցում զցեցինք, միքանիսները սկսեցին լաց լինել Զէինք հասկանում թէ ինչ էր նշանակում Գասպարի այս վերջին վարժունքը: Ահռելի տպասորութեան տակ դանելով՝ չը զիտէինք թէ ինչ անենք:

— Ծուտ արէք, դուրս գնացէք, կարծեմ տունս ուղղում է քանդել, ասաց նա լուրջ կերպով:

Մենք լալով ու օգնութիւն կանչելով դուրս վազեցինք ոտարիի: Անձրեւ դադարել էր, բայց երկինքը դարձեալ պատաժ էր մոխրագոյն ամնզերով: Օրը վերջանալու վրայ էր: Գասպարը նոյնպէս դուրս եկաւ ու դուրս բերեց մեր կօշիկները: Նորից տուն մտաւ, շաապով դուրս բերեց հրացանը, (որ մի ժամ առաջ խաղացնում էինք մենք), մտաւ իր պարտէզի մէջ ու ոտները թաց գետնին զարկելով՝ սպառնալի խօսքեր էր ուղղում: Հը զիտեմ թէ ում:

### III

Երրորդ անգամ էլ առիթ ունեցայ Գասպարին տեսնելու: Վերև յիշած դէպքից յետոյ անցել էր մօտ չորս տարի: Մի հրաշալի գարնան առաւօտ հօրս հետ միասին զբօսնում էի մեր գիւղի հրապարակի վրա: Բաւականաչափ մարդիկ էին հաւաքւել այդտեղ, ինչպէս միշտ գարնան պայծառ օրերին և խումբ-խումբ բաժանւած կատակներ էին անում, իսկ պատանիները գնդակներով էին խաղում ու զւարձանում: Հրապարակի մի անկիւնում սափրիչի դուքանի առաջ մեծ բազմութիւն էր հաւաքւած, որտեղից ժամանակ առժամանակ ոգեսորւած ծիծաղ էր բարձրանում: Մի քանի չարաճնիներ բարձրացել էին դուքանի կոտորը ու անտեղից էին նայում: Այնտեղ երկու պքաղաղներ էին կռւեցնում: Այդ միջոցին հրացանակիր զինւորները՝ շրջապատած մի շղթայակապ կալանաւորին՝ անցան հրապարակի վրացով: Մի ակնթարթում բոլոր ներկայ եղող մարդկանց հայեացքները կենդրոնացան այդ կալանաւորի վրայ: Ումնաք սառնասիրտ կերպով ասեցին թէ վաղ թէ ուշ դրան այդ խայտառակութիւնն էր սպասում: Ումնաք խղճում էին ասելով թէ ոչ ոքին դա վնաս չէր տալիս, ինչ էին ուղղում նրանից, թող լիներ ազատ, դրանով ուժն ինչ էր պակասում: իսկ վեռահասները

զայրացած պնդում էին, որ նա դաւաճանութեան ու մատնութեան զո՞ն էր։ Այդ կալանաւորը մեր ծանօթ Գասպարն էր։ Նա կարծես փոքրացել էր, նիհարել էր ու ծերացել։ Նա քայլում էր այնպէս զգուշութեամբ, կարծես վախենում էր իր ոտի ձայնը լսելուց։ Գլուխը կախել էր կուրծքի վրայ ու խուսափում էր դէս ու դէն նայելուց։ Բազմութեան միջից դուրս պրծաւ անխոհեմ դէմքով մի մարդ ու ի սրտէ ուրախանալով դրա թշւառութեան վրայ, աղաղակում էր՝ «Քաջ Գասպար, վերջապէս բռնեցին պոչդ ու պոկեցին կրծքիդ վրայից գողացած ու անազնիւ կերպով ձեռք բերած մէդախները։ Լաւ տեղ ես ընկել, չը սխալես ու դուրս չը գաս։ Ո՞ւրես զնում, դալլաք Սանդրօն գանգատ է տալի քեզ վրայ որ մորուքդ սափրելու փողեր ես պարտ...» Դու ուզեցիր ինձ յաղթել, բայց մոռանում էիր, որ Աբուքարի յաղթողը դեռ ևս չի ծնւել։

---

Նատ աննշան ժամանակից յետոյ Գասպարը վախճանեց բանդում։ Նրա անշուք գերեզմանը շուտով ջնջւեց երկրի երեսից, սակայն շատերը դեռ ևս յիշում են; և երբ պատահմամբ անցնում են այն կողմերը՝ ակամայ մտաքերում են մի քանի արկածներ նրա կեանքից ու ներողամտաբար ժպտում։

---